MA-SIS
ՄԱ-ՍԻՍ

Gazette des Arméniens de Lille, n° 3, Mars 2008

Nous exprimons nos profondes condoléances aux familles et aux proches des victimes des violences perpétrées par les autorités d'Arménie. Nous appelons à la restitution immédiate des libertés civiques et à la libération de tous les prisonniers politiques, au respect des droits de l'Homme et à l'abandon de l'oppression de la volonté de liberté du peuple.

Մենք մեր խորին ցավակցությունն ենք արտահայտում Հայաստանի իշխանությունների կողմից իրականացրած բռնությունների հետևանքով զոհվածների ընտանիքներին և հարազատներին: Կո՛չ ենք անում անհապաղ վերականգնել քաղաքացիական ազատությունները և ազատ արձակել բոլոր քաղբանտարկյալներին, հարգել Մարդու իրավունքները և չոտնահարել ժողովրդի կամքի ու ազատության զգացումը:

PÂQUES ARMÉNIENNES

La Pâques est une des cinq principales fêtes de l'Église arménienne et elle a une place particulière dans le calendrier ecclésiastique. Elle symbolise l'éveil de la nature. Étant mobile, elle est toujours fêtée le premier dimanche après la pleine lune qui suit l'équinoxe de printemps.

Préparation des œufs de Pâques par les enfants de l'école arménienne
Դպրոցի երեխաները՝ Զատիկի ձվերը պատրաստելու ժամանակ

Selon certaines interprétations, la Pâques est dérivée du mot « se séparer » qui comporte l'idée de séparation des saisons et des couleurs. Ce n'est pas par hasard que les personnes mettent sur les tables festives les œufs colorés qui sont les symboles de l'arbre saint et de la vie.

Selon une autre interprétation, le mot « Pâques » est directement lié au verbe « se libérer ». De toute évidence, il s'agit de la libération des règles strictes et des privations du grand Jeûne qui dure 40 jours: Avant aller assister aux vêpres, les fidèles mettent un œuf dans leur poche qui sera consommé juste après la cérémonie religieuse.

À l'origine, la Pâques était la fête des Juifs[1] et signifiait leur libération de l'esclavage égyptien et leur séparation du milieu païen au 13^{e} siècle avant J.-C. La crucifixion de Jésus coïncide avec la fête de Pâques juive. Au début, tous les chrétiens fêtaient la Pâques avec les Juifs le vendredi après l'équinoxe, le jour de la pleine lune.

[1] En hébreu « pessah » signifie le passage d'un endroit à l'autre ou d'un état à l'autre.

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՏԻԿ

Զատիկը՝ հայ եկեղեցու հինգ գլխավոր տաղավար տոներից մեկը, հայոց եկեղեցական տոնացույցում գրավում է առանձնահատուկ տեղ: Այն խորհրդանշում է բնության զարթոնքը և շարժական լինելով՝ միշտ նշվում է գարնան գիշերհավասարին և լիալուսնին հաջորդող առաջին կիրակի օրը:

Որոշ մեկնաբանությամբ՝ Զատիկը առաջացել է «զատվել» բառից, որն իր մեջ կրում է տարվա եղանակների և գույների զատվելու իմաստը: Պատահական չէ, որ ժողովուրդն այդ օրը սեղաններին դնում է տարբեր գույներով ներկած ձվեր, որոնք կենաց ծառի և կյանքի խորհրդանիշ են:

Մեկ այլ մեկնաբանությամբ «Զատիկ» բառն անմիջական կապ ունի «ազատվել» բայի հետ: Հավանաբար խոսքը ինչպես ձմռանից, այնպես էլ 40 օր տևող Մեծ Պահքի խիստ կանոններից և զրկանքներից ազատվելու մասին է : Երեկոյան ժամերգությանը գնալուց առաջ հավատացյալները ձու էին դնում իրենց գրպանները, որն ուտում էին արարողությունից անմիջապես հետո:

Հին ժամանակներում Զատիկը եղել է հրեաների[2] տոնը, որը մ.թ.ա. 13-րդ դարում նշանակել է եգիպտական ստրկությունից ազատվելը և զատվելը հեթանոսական միջավայրից: Քրիստոսի խաչվելը համընկնում է հրեական Զատիկի հետ: Սկզբնական ժամանակաշրջանում բոլոր քրիստոնյաները այդ տոնը նշում էին հրեաների հետ՝ գարնան գիշերահավասարին հաջորդող լուսնի լրման առաջին ուրբաթ օրը:

Քրիստոնեության տարածումից մոտ երեք դար հետո եկեղեցիներից շատերը Զատիկը սկսեցին տոնել այդ նույն շա-

Une occasion pour les enfants d'écrire sur autre chose que du papier
Բացի թղթից երեխաները կարող էին գրել նաև այլ իրերի վրա

[2] Եբրայերեն «պասեք»՝ անցում որևէ տեղից կամ վիճակից դեպի մյուսը:

Trois siècles environ après la propagation du christianisme, la plupart des églises commencent à fêter Pâques le dimanche de la même semaine, car Jésus a été ressuscité le troisième jour. En 1582, le pape de Rome Grégoire XIII introduit le nouveau calendrier grégorien qui a influé sur le jour de la fête. C'est à ce moment que les orthodoxes ont décidé que leur fête ne devait jamais coïncider avec la Pâques juive. L'église apostolique arménienne est toujours restée fidèle à ses traditions et à son calendrier ecclésiastique. Elle fête la Pâques pendant la période du 22 mars au 25 avril, c'est-à-dire le premier dimanche suivant l'équinoxe et la pleine lune.

La Pâques est toujours précédée par le Carême et la Grande Semaine dont chaque jour symbolise certains événements qui ont eu lieu pendant la dernière semaine de la vie terrestre de Jésus.

Les cérémonies de Pâques proprement dites débutent le soir du Samedi Saint avec la messe de célébration de la Veillée pascale dans les églises. Le matin dans les lieux de culte, on célèbre l'office, puis suit la Messe Sainte. Pendant la fête de la Résurrection, les fidèles s'échangent les paroles suivantes : « Jésus est ressuscité », « Bénie soit la résurrection de Jésus ».

La table festive du dimanche est riche de plats. Traditionnellement, on y met le poisson, les herbes et les œufs bénis à l'église. En règle générale, les œufs sont colorés en rouge, ce qui symbolise le sang versé par Jésus. L'œuf, selon G. Tatevatsi, symbolise le monde : « La coquille ressemble au ciel, la membrane est l'air, le blanc est l'eau et le jaune est la terre ». Le pilaf de riz symbolise la terre de notre planète qui a été peuplée par Dieu, et les grains de raisin sec symbolisent les choisis de Dieu qui ont cru à la résurrection de Jésus. Le jour de cette fête, dans chaque famille, les enfants organisent une compétition en cassant les œufs.

Garik Galstyan

Tout est prêt pour la table festive de la maison
Ամեն ինչ պատրաստ է տոնական սեղանի համար

LE NOËL ARMÉNIEN

Prés de 130 personnes ont assisté à la messe du Noël arménien célébrée par le Père Haroutioun Tachedjian en l'église Saint Benoît de Lille. Cette église nous a été aimablement prêtée par le prêtre catholique de la paroisse et son représentant laïque Monsieur Degallaix.

Ce fut un vrai moment de paix et de communion. Le Père venu spécialement de la région parisienne nous a fait part de son étonnement de voir tant de personnes réunies et de son plaisir de nous avoir rencontrés. Il était accompagné d'une chanteuse qui a mis en valeur cette messe. Au cours de la cérémonie, Monsieur Karen Davtian a été choisi pour devenir le parrain de notre communauté pour cette année. Il a aidé le prêtre pendant sa messe et tout particulièrement pendant la communion et la Bénédiction de l'eau répartie ensuite entre les présents qui le désiraient.

բաթվա կիրակի օրը, քանի որ Քրիստոսը հարություն էր առել երրորդ օրը: 1582 թ. Հռոմի Գրիգորիս XIII պապը ներմուծեց նոր գրիգորյան տոմարը, որն էլ ունեցավ իր ազդեցությունը տոնի օրվա վրա: Ուղղափառներն այդ ժամանակ պայման դրեցին, ըստ որի իրենց տոնը երբեք չպետք է համընկներ հրեական Զատիկի հետ: Հայ առաքելական եկեղեցին միշտ հավատարիմ է մնացել իր ավանդույթներին և տոնակարգին: Նա տոնում է Զատիկը մարտի 22-ից մինչև ապրիլի 25-ը ընկած ժամանակահատվածում, այսինքն՝ գարնան գիշերահավասարին և լիալուսնին հաջորդող առաջին կիրակի օրը:

Զատիկին միշտ նախորդում են Մեծ Պահքը և Ավագ շաբաթը: Վերջինիս յուրաքանչյուր օրը խորհրդանշում է Քրիստոսի երկրային կյանքի վերջին շաբաթվա ընթացքում տեղի ունեցած առանձին դեպքերը:

Բուն զատկական տոնակատարությունները սկսվում են Ավագ շաբաթի երեկոյան, երբ եկեղեցիներում մատուցվում է Ճրագալույցի (ճրագ լուցանել, վառել) պատարագը: Առավոտյան եկեղեցիներում կատարվում է ժամերգություն, ապա մատուցվում սբ. Պատարագը: Սբ. Հարության տոնին հավատացյալները միմյանց ողջունում են «Քրիստոս հարյավ ի մեռելոց» ավետիսով, պատասխանում՝ «Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի»:

Տոնական կիրակնօրյա սեղանը հարուստ է ուտեստներով: Ավանդաբար սեղանին դնում են ձուկ, կանաչեղեն և եկեղեցում օրհնված ձու: Ձվերը, որպես կանոն, ներկվում են կարմիր գույնով, որը խորհրդանշում է Քրիստոսի թափած արյունը: Ձուն, ըստ Գ. Տաթևացու, խորհրդանշում է աշխարհը. «Դրսի կեղևը նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղինն էլ երկիրն է»: Բրնձով փլավը խորհրդանշում է Երկիր մոլորակի հողը, ուր Աստված բնակեցրեց մարդկանց: Իսկ չամիչի հատիկները խորհրդանշում են Աստծու ընտրյալներին, որոնք հավատացին Քրիստոսի հարությանը: Այս տոնի օրը յուրաքանչյուր ընտանիքում երեխաները միշտ մրցություն են կազմակերպում՝ ջարդելով ներկած ձվերը:

Գարիկ Գալստյան

L'exercice d'écriture des enfants Գրելու վարժություն՝ երեխաների համար

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Մոտ 130 մարդ մասնակցեց սուրբծննդյան պատարագին, որը մատուցեց Հայր Հարություն Թաշճեանը Լիլ քաղաքի Սբ. Բենուա եկեղեցում, որը մեծ սիրով մեզ էին տրամադրել ծխական կաթոլիկ քահանան և նրա քաղաքացիական ներկայացուցիչ պ. Դեգալլեն:

Դա մի իսկական հաղորդության և հոգու խաղաղության պահ էր: Տեր Հայրը, որը Փարիզի շրջանից հատուկ ժամանել էր մեզ համար, հայտնեց իր զարմանքը՝ տեսնելով հավաքված մեծաթիվ մարդկանց, և իր մեծ ուրախությունը՝ կապված մեր այս հանդիպման հետ: Նրան ուղեկցում էր մի երգչուհի, որի երգերը մեծ շուք տվեցին պատարագին: Արարողության ժամանակ պ. Կարեն Դավթյանը ընտրվեց որպես այս տարվա լիլահայ համայնքի խաչ-քավոր: Պատարագի ընթացքում

Le père Tachedjian et Karen Davtian, notre parrain, lors de la cérémonie
Հայր Թաշճեանը և խաչ-քավոր Կարեն Դավթյանը պատարագի ժամանակ

À la fin de cette cérémonie, quelques enfants, en costume, ont porté des présents au petit Jésus, symbolisant ainsi les rois mages. Ils ont répondu avec plein de fraîcheur aux questions du prêtre concernant la vie du Christ.

Cette messe a été suivie d'un repas frugal, et des spectacles de contes et de danses donnés par les enfants de l'école de langue arménienne et du groupe de danse. Le père Noël a également fait une courte apparition pour distribuer les cadeaux.

Merci à tout ceux qui ont permis de réussir cette bonne journée.

Louisette Lamarche

Le discours de Louisette Lamarche, Présidente de l'association *Ararat*, à l'occasion de la FÊTE DE NOËL DU 5 JANVIER 2008

Bonjour à tous, bonne année 2008 et bonne fête de Noël. Je voudrait saluer la présence de :

Monsieur Walid Hanna, adjoint au Maire de Lille et Président du Conseil du quartier du Faubourg de Béthune. La ville de Lille nous apporte son soutien financier dans des projets comme la sortie du 11 novembre dernier, et son aide logistique dans, par exemple, la mise à disposition de matériel pour nos fêtes. Merci à ce représentant d'être présent aujourd'hui.

Messieurs les Président et directeur du centre social qui nous héberge pour nos activités et nous apporte également son aide. Nous ferrons certainement un article dans une prochaine gazette pour expliquer ce qu'est le centre social et pourquoi cela est si important de travailler ensemble.

Le Père Tachedjian pour être venu spécialement de la région parisienne célébrer notre messe.

La dernière fois que j'ai pris la parole, c'était le 21 septembre dernier. Je vous ai parlé de l'indépendance de l'Arménie et j'ai totalement oublié de vous présenter notre association, au grand dam de ma secrétaire.

Les enfants en costume à la fin de la messe
Զգեստավորված երեխաները պատարագի վերջում

La messe de Noël arménien Սուրբծննդյան պատարագը

նա օգնեց Տեր հորը, հատկապես հաղորդության և Ջրօրհնեքի ժամանակ: Օրհնած ջուրն այնուհետև բաժանվեց ներկաների միջև:

Արարողության վերջում հատուկ հագուստներ հագած մի քանի երեխաներ նվերներ բերեցին փոքրիկ Հիսուսին՝ այսպիսով խորհրդանշելով մոգերին: Նրանք մեծ խանդավառությամբ պատասխանեցին Տեր Հոր՝ Հիսուսի կյանքի հետ կապված հարցերին:

Պատարագի ավարտից հետո ներկաները հրավիրվեցին մի համեստ ճաշկերույթի, որի ընթացքում հայոց լեզվի դասընթացներ և հայկական պարի խմբակ հաճախող երեխաները ներկայացրեցին փոքրիկ բեմադրություններ և պարեր: Կարճ ժամանակով եկավ նաև Ձմեռ պապը՝ երեխաներին նվերներ բաժանելու համար:

Շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր աջակցեցին մեր այս տոնական միջոցառման իրականացմանը:

Լուիզեթ Լամարշ

2008 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 5-Ի ՍՈՒՐԲԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԸ («Արարատ» միության նախագահ Լուիզեթ Լամարշի ելույթը)

Ողջունում եմ բոլորիդ և շնորհավորում Նոր 2008 թ. և Սուրբ Ծնունդը: Ես կցանկանայի ողջունել այստեղ ներկա՝

. Լիլի փոխքաղաքապետ, Ֆոբուր դը Բեթյուն թաղամասի ավագանու նախագահ պ. Ուալիդ Հաննային: Լիլի քաղաքապետարանը մեզ ցույց է տալիս ֆինանսական օգնություն մեր միջոցառումների կազմակերպման գործում, ինչպես նոյեմբերի 11-ին, և օգնում կազմակերպչական հարցերում, մասնավորապես նյութական օժանդակություն ցույց տալով մեր կազմակերպած հավաքույթներին: Շնորհակալություն ենք հայտնում քաղաքապետարանի ներկայացուցիչին, որը ժամանակ գտավ մեզ այցելելու:

. Պարոնայք մշակույթի տան տնօրենին և նախագահին, ովքեր մեզ հյուրընկալում են կենտրոնի տանիքի տակ և աջակցում մեր միջոցառումների կազմակերպման գործում: Մեր թերթի գալիք համարներից մեկում մենք անպայման կպատրաստենք մի հոդված այն մասին, թե ի՞նչ է մշակույթի կենտրոնը, և ո՞րն է նրա հետ սերտ աշխատելու նպատակը:

. Տեր Հայր Թաշճեանին, որը հատուկ եկել է Փարիզի շրջանից, որպեսզի մատուցի այս պատարագը:

Սեպտեմբերի 21-ին էր, որ ես վերջին անգամ ելույթ ունեցա: Ես խոսեցի Հայաստանի անկախության մասին՝ բոլորովին մոռանալով ներկայացնել մեր միությունը՝ ի դժգոհություն մեր քարտուղարուհու:

Փորձեմ մի քանի բառով Ձեզ պատմել «Արարատ» միության մասին: Մենք հավաքվել ենք այստեղ, որպեսզի նշենք առաջին և հավանաբար ոչ վերջին սուրբծննդյան տոնը՝ կազմակերպված մեր միության ջանքերով: Լույս ենք ընծայել մեր թերթի երեք համար և կազմակերպել մի շարք միջոցառումներ:

Quelques mots donc aujourd'hui pour vous parler d'*Ararat*. Nous sommes réunis ici pour la première fête de Noël organisée par votre association et, à priori, ce ne sera pas la dernière. Nous avons fait paraître trois numéros de notre gazette et réalisé de nombreuses activités.

Depuis septembre dernier, quelques uns d'entre nous ont beaucoup travaillé pour arriver à ces résultats. Ils ne comptent pas leurs jours et en partie leurs nuits. Je vous rappelle qu'ils sont bénévoles, il faut le souligner. Ces quelques uns sont peu nombreux et je voudrais les citer pour que nous puissions les remercier : Siranouche et Haïk pour l'école, et Christina et Anna pour la danse. Sachez-le, sans ces quatre-là, rien n'aurait vu le jour. Merci donc à eux, et je crois qu'on peut les applaudir. Je voudrais aussi remercier leurs familles, leurs conjoints et enfants qui supportent leurs absences et les soutiennent.

La manifestation d'aujourd'hui ne s'est pas faite qu'avec ces quatre personnes. J'ai le plaisir de vous dire aujourd'hui que notre association compte 29 familles membres. Une bonne partie d'entre elles ont participé à la décision de monter cette fête au cours d'une réunion début décembre, et se sont investies dans les tâches de cuisine, de couture, de préparation de la salle, d'achats...

Il me semble donc que nous avons eu raison en septembre dernier de relancer cette association pour faire vivre et connaître notre communauté. L'adhésion n'est obligatoire que pour inscrire son enfant aux cours d'apprentissage de la langue. Les autres activités sont gratuites comme la messe de ce matin ou à prix coûtant comme la sortie pour voir le spectacle de *Yeraz*, ou la gazette.

Nous ne faisons pas de bénéfices et les comptes sont à la disposition de tous les membres qui souhaitent en avoir connaissance. Sans adhérer, vous pouvez nous laisser vos coordonnées afin d'être informés lorsqu'une manifestation est organisée.

Une fête appréciée de tous et de toutes   Տոնը բարձր գնահատվեց բոլորի կողմից

Après cette fête de Noël, nous avons quelques projets que je vous cite rapidement :

. avec le centre social, la Fête des femmes autour du 8 mars ;

. la fête du jeu fin mai ;

. pour Pâques, peut être une nouvelle messe et une fête avec un spectacle ouvert à toutes les communautés du quartier.

. pour la fin de l'année scolaire, la fête de l'alphabet, comme en Arménie, avec peut être les autres ateliers de langue du centre social et de la médiathèque ;

. si notre demande de financement est acceptée, des cours de danse avec *Yeraz* et un nouveau spectacle le 21 septembre prochain.

Venez vous informer, donnez nous vos idées, vos remarques, venez nous aider si vous avez du temps et de la volonté. Nous sommes là aussi pour cela aujourd'hui.

Pour conclure, cette fête de Noël a été réclamée par beaucoup d'entre vous qui désiraient par cette occasion saluer et souhaiter la bonne année à tous. Nous l'avons voulu toute simple autour d'un repas traditionnel et des activités proposées par et pour vos enfants.

Alors à tous encore Bonne année et bon Noël.

Մեզանից մի քանիսի տքնաջան, օր ու մասամբ գիշերվա աշխատանքի շնորհիվ է, որ անցյալ տարվա սեպտեմբեր ամսից սկսած մենք հասանք այսպիսի արդյունքների: Ես կցանկանայի մեկ անգամ ևս հիշեցնել և ընդգծել, որ նրանք կամավորներ են: Շնորհակալություն հայտնելու համար կուզենայի հատուկ նշել նրանց անունները՝ հաշվի առնելով այն փաստը, որ նրանք սակավաթիվ են: Դպրոցով զբաղվում են Սիրանուշն ու Հայկը, իսկ պարի դասընթացներով՝ Քրիստինան ու Աննան: Իմացե՛ք, որ առանց այս չորս հոգու ակտիվ միջամտության ոչինչ չէր ստացվի: Շնորհակալություն նրանց, և ես կարծում եմ, որ կարող ենք նաև ծափողջունել: Ես կցանկանայի շնորհակալական խոսք հղել նաև նրանց ընտանիքներին, ամուսիններին, կանանց ու երեխաներին, ովքեր սատարում են նրանց և ներողամտությամբ ընկալում նրանց բացակայությունը:

Սակայն այսօրվա միջոցառումը միայն այս չորս հոգին չեն կազմակերպել: Ես մեծ ուրախությամբ ցանկանում եմ նշել, որ մեր միությունն ունի արդեն 29 ընտանիք-անդամ: Նրանց մեծ մասը մասնակցել է դեկտեմբեր ամսվա սկզբում գումարված ժողովին, որտեղ որոշվեց կազմակերպել այս միջոցառումը: Նրանք իրենց ներդրումն ունեցան խոհանոցի աշխատանքների, կարի, դահլիճի նախապատրաստման, գնումներ կատարելու գործում:

Կարելի է հետևություն անել, որ մենք իրավացի էինք, երբ անցյալ տարվա սեպտեմբեր ամսին որոշեցինք նոր կյանք և ճանաչում տալ մեր միությանը: Միության անդամակցութունը պարտադիր է միայն այն ընտանիքների համար, որոնց երեխաները հաճախում են հայոց լեզվի դասընթացներին: Մյուս կազմակերպվող միջոցառումներն անվճար են, ինչպես այսօրվա պատարագը, կամ էլ զեղջ գներով, ինչպես «Երազ» պարի խմբի ներկայացման տոմսերի ձեռք բերելը կամ էլ մեր թերթի համար սահմանած գինը:

Մենք շահույթ չենք ստանում, և մեր հաշվապահական թղթերը գտնվում են միության բոլոր անդամների տրամադրության տակ, որոնք ցանկություն կհայտնեն ծանոթանալ դրանց: Առանց անդամակցելու դուք կարող եք մեզ թողնել ձեր հասցեն կամ ձեզ հետ կապի միջոցը, որպեսզի կարողանանք տեղյակ պահել կազմակերպվող միջոցառումների մասին:

Սուրբծննդյան տոնից հետո մենք մտադիր ենք իրականացնել մի քանի ծրագրեր, որոնք հիմա համառոտ կներկայացնեմ.

. մարտի 8-ի Կանանց տոնի նշումը՝ մշակույթի տան հետ համատեղ,

. մայիս ամսվա վերջին կայանալիք Խաղերի տոնը,

. հնարավոր է նոր պատարագ Զատիկի կապակցությամբ և տոնական ներկայացում, որը բաց կլինի թաղամասի բոլոր համայնքների համար,

. այբուբենի տոնը՝ ուսումնական տարվա վերջում, ինչպես Հայաստանում, հավանական է մշակույթի տան և գրադարանում անցկացվող լեզվի մյուս խմբակների հետ,

. ֆինանսական օգնություն ստանալու մեր խնդրանքի բավարարման դեպքում՝ պարի դասընթացներ «Երազ»ի հետ և նոր ներկայացում գալիք սեպտեմբերի 21-ին:

Եկեք տեղեկություններ ստանալու, ձեր առաջարկություններն ու նկատողություններն անելու, մեզ օգնելու, եթե ունեք դրա ժամանակը և ցանկությունը: Այսօր այստեղ մենք հավաքվել ենք նաև այդ կապակցությամբ:

Եզրափակելով ասեմ, որ ձեզանից շատերն էին առաջարկել կազմակերպել սուրբծննդյան այս տոնը, որը հարմար առիթ է միմյանց շնորհավորելու և բարի տարի ցանկանալու համար: Մենք դա կազմակերպել ենք շատ պարզ ձևով՝ավանդական ճաշ, ներկայացում և խաղեր՝ երեխաների մասնակցությամբ:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ բոլորիդ Նոր տարին և Սուրբ Ծնունդը:

LES FÊTES DES FEMMES
(des ateliers, un spectacle et une sortie à Paris)

La Journée internationale des Femmes a eu lieu comme chaque année le 8 mars. Cette fête a une importance beaucoup plus forte en Arménie qu'en France. Toutes les femmes sont fêtées et la soirée du 8 mars leur est consacrée à la télévision avec la diffusion de spectacles de variété spécifique.

Le 5 mars, la Ville de Lille a proposé une soirée consacrée aux femmes lilloises. Le centre social du quartier du Faubourg de Béthune a également organisé une semaine d'animations intitulée *Entre elles*. De nombreuses activités ont été proposées : fabrication de bijoux et de meubles, tatouage, relaxation et soins esthétiques, repas et découverte d'autres cultures… Quelques unes d'entre nous ont pu participer à certains ateliers.

Les membres de l'association *Ararat* se sont associés à cette semaine en participant à l'organisation d'un goûter autour du film *Voyage en Arménie* de Robert Guédiguian. Une trentaine de femmes se sont donc réunies le vendredi 7 mars pour cette diffusion. Le film a été apprécié quoique certaines aient regretté que l'image donnée de l'Arménie ne soit pas plus positive. Les pâtisseries fabriquées le matin par les femmes ont été très appréciées.

Le goûter arménien a été un succès/ Հայկական թխվածքները բարձր գնահատվեցին

Afin d'aller encore plus loin que le goûter, les femmes arméniennes ont souhaité organiser une sortie à Paris pour aller visiter une exposition consacrée aux 20 ans de carrière du couturier Christian Lacroix. Il s'agissait par ce biais de donner l'occasion aux femmes de sortir de chez elles pour partager un moment de culture et de loisir, de satisfaire leur goût et leur intérêt pour la mode, de nouer le contact avec d'autres femmes du quartier et de pratiquer le français.

Cette action a été partagée avec le centre social du Faubourg de Béthune qui avait financé une partie du coût de cette opération. Une subvention du *Fond d'intervention des habitants* a également permis la réalisation de ce déplacement.

Le samedi 15 mars matin, nous sommes finalement partis à 69 personnes dont 29 Arméniens. Toutes les origines culturelles et tous les âges étaient représentés. Nous avions des mères avec leurs filles, des sœurs, des belles-sœurs et des amies.

Après une petite heure et un changement de chauffeur, le film *Le diable s'habille en Prada* a permis à toutes de patienter jusqu'à Paris. Après une première halte photographiques devant l'Arc de Triomphe, le groupe de l'association ar-ménienne s'est fait déposer à proximité de l'église arménienne Saint Jean-Baptiste pour une visite guidée par le père

ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
(խմբակներ, ներկայացում և էքսկուրսիա Փարիզում)

Ինչպես ամեն տարի, այս անգամ էլ մարտի 8-ին նշվեց Կանանց միջազգային օրը, որն ավելի մեծ տարածում ունի Հայաստանում, քան Ֆրանսիայում: Բոլոր կանանց շնորհավորում են, և մարտի 8-ի երեկոյան հեռուստատեսությունը նրանց է նվիրում հատուկ թողարկումներ և համերգներ:

Մարտի 5-ի երեկոյան Կանանց տոնի առթիվ Լիլի քաղաքապետարանը կազմակերպեց երեկո՝ նվիրված լիլուհիներին: Իր հերթին Ֆոբուր դը Բեթյունի մշակույթի տունը մեկ շաբաթ տևող միջոցառումների մի ծրագիր ներկայացրեց՝ «Կանանց համար» խորագրի ներքո. զարդեղեն և հաստ ստվարաթղթով կահույքի պատրաստում, դաջվածք, լավ ինքնազգացողություն, դեմքի խնամք և դիմահարդարում, ճաշեր և ծանոթություն այլ երկրների մշակույթների հետ: Մեզանից ոմանք կարողացան մասնակցել մի քանի խմբակների աշխատանքին:

Ներգրավվելով այս շաբաթվա միջոցառումներին՝ «Արարատ» միության անդամները կազմակերպեցին հայկական թխվածքների համտեսում, որի ընթացքում ներկաներին ցուցադրվեց Ռոբեր Գեդիգյանի «Ճանապարհորդություն դեպի Հայաստան» ֆիլմը: Այսպիսով, ուրբաթ՝ մարտի 7-ին, 30 կին հավաքվեցին այն նայելու համար: Ֆիլմը լավ ընդունվեց՝ չնայած այն հանգամանքին, որ ոմանք ափսոսանք հայտնեցին, թե Հայաստանը այնքան էլ դրական կողմից չէր ներկայացված: Առավոտյան կանանց պատրաստած խմորեղենները շատ լավ գնահատականի արժանացան:

Les Arméniennes de Lille dans la cour de l'église avec le Père Tachedjian
Լիլի հայուհիները եկեղեցու բակի խաչքարի մոտ՝ հայր Թաշճեանի հետ

Այնուհետև հայ կանայք ցանկություն էին հայտնել կազմակերպելու մեկօրյա ճանապարհորդություն դեպի Փարիզ, որի մեջ կմտներ Քրիստիան Լաքրուայի ցուցահանդեսի այցելությունը՝ նվիրված Նորաձևության տան 20-ամյակին: Այս նախաձեռնությամբ մենք ցանկանում էինք կանանց ընձեռել «տանից դուրս գալու» հնարավորություն, համատեղ կիսել մշակութային և ազատ ժամանցի պահեր, բավարարել նրանց ճաշակն ու հետաքրքրությունը դեպի նորաձևությունը, շփվել թաղամասի մյուս կանանց հետ՝ կատարելագործելով իրենց ֆրանսերենը:

Այս միջոցառումը կազմակերպվել էր Ֆոբուր դը Բեթյունի մշակույթի տան հետ, որն էլ մասնակիորեն հոգացել էր ճանապարհորդության ծախսերը: «Բնակիչների նախաձեռնությունների հիմնադրամ»ի ցույց տված ֆինանսական աջակցությունը նույնպես օգնեց ավարտին հասցնելու մեր այս նախաձեռնած գործը:

Այսպիսով մարտի 15-ի շաբաթ առավոտյան 69 հոգի, որից 29-ը՝ հայ, մեկնեցին Փարիզ: Կային տարիքային բոլոր խմբերի և բազմաթիվ ազգերի ներկայացուցիչներ՝ մայրեր իրենց դուստրերի հետ, քույրեր, զարմուհիներ, ընկերուհիներ:

Le groupe d'Arméniens au pied de l'Arc de Triomphe sur les Champs Élysées
Հայերի խումբը Շանզելիզեի Հաղթական Կամարի մոտ

Tachedjian. Cette magnifique église, achevée en 1904, a été construite grâce au don d'Alexandre Mantachian à une époque où la communauté arménienne de Paris ne comptait que 3 à 4 mille Arméniens commerçants et étudiants.

Puis nous avons rejoint la Seine par la place du Canada où nous avons pu admiré le statut de Komitas, un compositeur arménien décédé en France après avoir pu échapper au génocide.

Nous avons ensuite rejoint le jardin des Tuileries en longeant le bord de Seine. Le pique-nique dans ce jardin a été très bref afin de pouvoir rejoindre rapidement l'autre groupe au Musée des Arts décoratifs pour les visites guidées de l'exposition de mode Christian Lacroix.

C'est un véritable voyage au cours du temps, des couleurs et des formes qui nous a été proposé. Ebahies, nous sommes passées de vitrine en vitrine suivant notre guide qui nous expliquait les motivations et inspirations de ce créateur « qui aime passionnément les femmes » et voulait être conservateur au Musée de la mode et du textile du Louvre avant de devenir couturier de talent. Nous sommes passées des petites robes noires et blanches aux costumes de bains des années 1850, aux robes de mariées rouges et blanches, aux tenues de cocktails et de soirée, aux costumes à pois chers à notre Siranouche. Toutes les textures et toutes les couleurs étaient représentées.

À notre sortie, après une petite demie heure de shopping, le retour s'est effectué par le parc des Tuileries. Malgré notre retard, une halte en bus à la Tour Eiffel nous a permis d'assister à l'illumination de ce monument et de prendre de superbes photographies.

Le retour à Lille s'est fait d'une traite sous la pluie pour 22 heures 30 et ce sont des femmes fatiguées mais heureuses que nous avons quittées.

Louisette Lamarche

Ճանապարհի ընկնելուց մոտ մեկ ժամ հետո, երբ ղեկին նստեց մյուս վարորդը, մենք դիտեցինք «Սատանան հագնվում է Պրադայում» ֆիլմը, որն էլ մեզ օգնեց դիմանալ Փարիզ տանող ճանապարհիի դժվարություններին: հասնել Փարիզ: Հաղթական Կամարի մոտ լուսանկարվելու համար առաջին կանգառից հետո հայ համայնքի խումբը խնդրեց, որ իրենց իջեցնեն Սբ. Հովհաննես Մկրտիչ հայկական եկեղեցու մոտ, որի կազմակերպված այցելութունը ստանձնել էր Հայր Թաշճեանը: Այս հոյակապ եկեղեցին, որի շինարարությունն ավարտվել է 1904 թ., կառուցվել է Ալեքսանդր Մանթաշյանի նվիրատվության շնորհիվ, երբ Փարիզի հայկական համայնքն ուներ 3-ից 4 հազար հայ, հիմնականում առևտրականներ և ուսանողներ:

Այնուհետև ուղղվեցինք դեպի Սենայի ափ, որին կից Կանադայի հրապարակում հիացանք Մեծ Եղեռնից մազապուրծ եղած և Ֆրանսիայում վախճանված հայ երգահան Կոմիտասի արձանով:

Հետո մենք մտանք «Թյուիլրի» այգին, որը ձգվում է Սենայի երկայնքով: Այստեղ կարճատև զբոսախնջույքից հետո մենք շտապեցինք գնալ Դեկորատիվ արվեստների թանգարան, որպեսզի միանանք խմբի մյուս մասին: Մեզ սպասվում էր Քրիստիան Լաքրուայի նորաձևության ցուցահանդեսի այցելությունը:

Դա մի իսկական ճանապարհորդություն էր ժամանակի, գույների և ձևերի մեջ: Հիացած դեմքերով մենք անցանք մի ցուցափեղկից մյուսը՝ հետևելով մեր էքսկուրսավարին: Նա մեզ բացատրեց «ամբողջ սրտով կանանց սիրող» ստեղծագործողի նկատառումներն ու մղումները, ով ցանկություն ուներ դառնալ Լուվրի Նորաձևության և տեքստիլի թանգարանի տնօրենը: Փոքր սև ու սպիտակ շրջազգեստներից մենք անցանք 1850-ական թվականների լողազգեստներին, կարմիր ու սպիտակ հարսանեկան, ընդունելության և երեկոյան հագուստներին, ոլոռազարդ շքեղ զգեստներին, որոնք շատ հարազատ են մեր Սիրանուշին: Կային ամեն տեսակի հորինվածքներ և գույներ:

Այցելությունից և մոտ կես ժամ գնումներ կատարելուց հետո մենք ուղղվեցինք դեպի «Թյուիլրի» այգի, որ պատրաստվենք վերադարձին: Չնայած ժամանակի սղությանը, մեր ավտոբուսը կարճատև կանգառ արեց Էֆելյան աշտարակի հարևանությամբ, որն էլ մեզ հնարավորություն տվեց ականատեսը լինելու այս հուշարձանի լուսավառությանը: Մեզ հաջողվեց հոյակապ լուսանկարներ անել:

Դեպի Լիլ հորդառատ անձրևի տակ վերադարձի ճանապարհը շատ շուտ անցավ: Առանց կանգառ անելու 22.30-ին արդեն տեղում էինք: Կանայք հոգնած էին, բայց՝ երջանիկ:

Լուիզեթ Լամարշ



LE FILS FRANÇAIS DU PEUPLE ARMÉNIEN

Beaucoup le connaissait en Arménie, car Paul-Lucien Roban était un des rares Français qui vivait en Arménie. Selon un coup du sort, en 1947, à l'âge de 14 ans, il a pris la route de l'Arménie avec une des caravanes de rapatriés arméniens. Le rideau de fer de Staline a fermé derrière lui le chemin du retour.

Il est vrai qu'à deux reprises il a fait une demande pour retourner en France. La première fois, le KGB lui a fait comprendre que sa requête avait l'« odeur de la Sibérie ». Il a été contraint de se taire et a manifesté sa rage par des jets de pierres sur la photo de Staline qui ornait un des murs de sa maison. La deuxième fois il a osé renouveler sa demande après la mort de Staline sur fond d'amélioration des relations entre l'Union soviétique et la France. C'est à cette époque que le secrétaire d'État auprès du Ministère français des affaires étrangères Jean-François Deniau a rendu une visite officielle à Erevan.

Or, cette fois-ci aussi, la manifestation des Arméniens rapatriés de France souhaitant pouvoir retourner en France a été dispersée et n'a pas permis de faire aboutir sa demande.

G.G – Pourquoi n'avez-vous pas fait une troisième demande pour retourner en France ?

P.R. – C'est la faute de madame Rozik, mon épouse, a répondu en souriant Monsieur Roban. Je me suis marié en 1957. Nous travaillions déjà ensemble dans une boulangerie et nous nous aimions. Elle était une femme au foyer exceptionnelle. Elle a créé pour moi des conditions de vie magnifiques, un petit paradis, que je ne pensais même pas à quitter. Par ailleurs, plusieurs jeunes Français sont venus en Arménie, chez nous, et ils se sont mariés avec des femmes arméniennes. Beaucoup reconnaissent que les Arméniennes sont des compagnes de vie fidèles et de magnifiques femmes au foyer.

Et c'est vrai, la maison de Monsieur Roban en Arménie était une sorte de chambre d'hôtes pour tous les Français, surtout dans les années 1990, quand le pays est devenu accessible pour eux. Ces derniers visitaient l'Arménie pour apporter leurs concours et aide au peuple arménien. Les Français appelaient sa maison de la ville d'Artachat : l'« ambassade de France en Arménie ».

G.G – Pourquoi, malgré tout, avez-vous décidé de revenir en France ?

P.R. – Pendant les années passées en Arménie, mon cœur battait pour la France. Mes filles étaient mariées, j'avais quatre petits-enfants talentueux. À cette période, les conditions de vie en Arménie ne leurs permettaient pas de trouver leur

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՖՐԱՆՍԻԱՑԻ ԶԱՎԱԿԸ

Հայաստանում նրան շատերն էին ճանաչում, քանզի Պոլ Լյուսիեն Ռոբանը Հայաստանում ապրող եզակի ֆրանսիացիներից էր: Ճակատագրի բերումով 14 տարեկան հասակում, 1947 թվականին հայրենիք վերադարձող հայերի քարավանի հետ եկել էր Հայաստան, և ստալինյան երկաթե վարագույրը փակվել էր նրա առջև. այլևս վերադարձ չկար:

Ճիշտ է, երկու անգամ դիմեց Ֆրանսիա վերադառնալու համար: Առաջին անգամ ՊԱԿ-ում նրան հասկացրին, որ իր այդ դիմումից «Սիբիրի հոտ է գալիս»: Ստիպված լռեց՝ իր ներքին ցասումը արտահայտելով իրենց տան պատից կախված Ստալինի նկարին քարեր նետելով: Երկրորդ անգամ համարձակվեց արդեն նրա մահից հետո, երբ Խորհրդային Միության հետ Ֆրանսիայի հարաբերությունները սկսեցին լավանալ, և Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությանը կցված պետական քարտուղար Ժան-Ֆրանսուա Դենիոն պաշտոնական այցով ժամանեց Երևան:

Սակայն այդ անգամ էլ Ֆրանսիայից հայրենադարձված հայերի ցույցը՝ Ֆրանսիա վերադառնալու պահանջով ցրվեց, և նախաձեռնությունը կրկին ձախողվեց:

Գ.Գ. – Իսկ ինչո՞ւ հետո երրորդ անգամ էլ չդիմեցիք Ֆրանսիա վերառնալու համար:

Պ.Ռ. – Մեղավորը կինս էր, տիկին Ռոզիկը,- ժպտալով պատասխանեց պարոն Ռոբանը: - 1957թ. մենք ամուսնացանք: Երկուսս էլ աշխատում էինք հացի գործարանում և սիրում էինք միմյանց: Նա այնքան հրաշալի տանտիկին էր, այնպիսի հրաշալի պայմաններ ու մի փոքրիկ դրախտ էր ստեղծել ինձ համար, որ մտքովս էլ չէր անցնում այդ դրախտը լքել: Ի դեպ ասեմ, որ շատ ֆրանսիացի երիտասարդներ այցելել են Հայաստանում մեր տուն և ծանոթանալով հայուհիների հետ՝ ամուսնացել: Բոլորը միաբերան նույնն են հաստատում, որ հայուհիները անդավաճան կյանքի ընկեր և հրաշալի տանտիկիններ են:

Եվ, իսկապես, Հայաստանում պարոն Ռոբանի տունը մի յուրօրինակ իջևանատուն էր բոլոր ֆրանսիացիների համար, հատկապես 1990-ական թվականներին, երբ Հայաստան այցելելը նրանց համար դարձավ դյուրին: Նրանք գալիս էին օգնություն ցուցաբերելու մեր երկրին ու հայ ժողովրդին: Արտաշատում գտնվող նրա տունը ֆրանսիացիներն անվանում էին «Ֆրանսիայի հայկական դեսպանատուն»:

Գ.Գ. – Իսկ ինչպե՞ս եղավ, որ, այնուամենայնիվ, որոշեցիք Ֆրանսիա հայրենադարձվել:

Պ.Ռ. – Այն բոլոր տարիներին, որ ապրել եմ Հայաստանում, սիրտս բաբախել է Ֆրանսիայի համար: Աղջիկներիս ամուսնացրել էի, ունեի չորս հրաշալի, տաղանդավոր թոռնիկներ, սակայն այն ժամանակ Հայաստանի պայմանները թույլ չէին տալիս նրանց ճանապարհ հարթել: Երկիրը պատերազմի մեջ էր, հետո երկրաշարժ, ավերվածություն, տնտեսական շրջափակում հարևան երկրների կողմից:

Որոշեցինք հանուն մեր թոռնիկների ապագայի վերադառնալ Ֆրանսիա, քանի որ բոլորս էլ ունեինք Ֆրանսիայի քաղաքացիություն: Մարտի 22-ին կլրանա 10 տարին, որ եկել ենք Ֆրանսիա, և պիտի ասեմ, որ չենք սխալվել:

Պատկերացրեք իմ հուզմունքը, երբ ըմբշամարտի աշխարհի առաջնությունում Ֆրանսիայի հավաքական թիմի առջևից քայլում է իմ թոռնիկը՝ Ֆրանսիայի ազգային դրոշը ձեռքին, կամ երբ մյուս թոռնիկս Լիլի օպերային թատրոնի բեմից երգում է, իսկ ես նստած եմ պարտերի առաջին շարքում:

Գալով Ֆրանսիա՝ մենք ոչ մի օր անգործ չմնացինք, արագորեն մերվեցինք նոր կյանքին: Ընտանիքիս բոլոր անդամներն անմիջապես աշխատանք գտան, աշխատեցին, տուն ու տեղ դրեցին: Նրանց կյանքի պայմանները հրաշալի են, նույնիսկ ավելի լավ, քան այստեղ ծնված ու մեծացած շատ-շատերի համար: Ո՞րն է պատճառը: Իհա՛րկե, աշխատանքը:

voie. Le pays était en guerre, ensuite sont survenus le tremblement de terre, la dévastation, le blocus économique de la part des pays voisins.

Pour l'avenir de nos petits-enfants, nous avons décidé de retourner en France, car nous possédions déjà tous des passeports français. Le 22 mars cela fera 10 ans que nous sommes arrivés en France et je dois dire, que nous n'avons pas fait un mauvais choix.

Vous pouvez imaginer mon émotion quand lors du championnat mondial de lutte c'est mon petit-fils qui marchait en tête de l'équipe de France avec le drapeau français dans ses mains. Ou encore quand mon autre petit-fils chante sur la scène de l'Opéra de Lille et que moi, je suis assis au premier rang du parterre.

Une fois en France, nous ne sommes pas restés un seul jour les bras croisés. Nous nous sommes vite intégrés à notre nouvelle vie. Tous les membres de ma famille ont rapidement trouvé un travail. En travaillant, ils se sont bien implantés et ont des conditions formidables de vie, parfois meilleures que celles de beaucoup de ceux qui sont nés et ont grandi ici. Le bien-être repose bien sûr sur le travail.

Les trois Paul-Luciens : Youri Paul-Lucien, Paul-Lucien et Rouben Paul-Lucien
Երեք Պոլ-Լյուսիենները՝ Յուրի Պոլ-Լյուսիեն, Պոլ Լյուսիեն, Ռուբեն Պոլ-Լյուսիեն

Je dis à tous les Arméniens qui arrivent en France que cette dernière est un bon pays, travaillez, créez et profitez de la vie. C'est à partir du comportement de chacun d'entre vous qu'ici on va juger le peuple arménien. Quant au peuple arménien, il est honnête, travailleur, intelligent et ce qui est le plus important, loyal envers la France. C'est ainsi qu'il existe, depuis plusieurs décennies, un penchant, une complicité, une confiance mutuelle entre nos deux peuples, ce que vous verrez rarement chez d'autres. De plus, en vivant 50 ans parmi les Arméniens, je connais bien leur mentalité. Ils sont très reconnaissants : ils aspirent toujours à rendre dix, cent fois plus le bien qu'ils ont reçu.

Même après plusieurs siècles, le peuple arménien n'oubliera jamais que la France a été parmi les premiers pays qui ont apporté leur concours au peuple arménien aussi bien après le génocide qu'après le séisme dévastateur de 1988. Ce n'est pas par hasard que la France est devenue un des pays d'attachement pour les Arméniens.

« Il a y plusieurs années, continue M. Roban, à l'Église arménienne de Paris, j'ai fait la connaissance d'un Français qui a vécu pendant longtemps à Marseille. Cette personne était tout à fait amoureuse du peuple arménien et le jour de la Pâques arménienne il a décidé de visiter l'église arménienne. Il m'a dit : « J'ai travaillé en tant que policier dans une ville où habitent des dizaines de milliers d'Arméniens. Pendant ces années de travail, je n'ai rien remarqué de négatif de la part de ce peuple. Tous sont artistes, artisans, sportifs, scientifiques,

Ես այստեղ եկած բոլոր հայերին ասում եմ, որ Ֆրանսիան լավ երկիր է, աշխատե՛ք, ստեղծե՛ք ու վայելե՛ք այս կյանքը: Ձեզանից յուրաքանչյուրի վարքագծով է պայմանավորված, թե այստեղ ինչ կարծիք կկազմեն ընդհանրապես հայ ժողովրդի մասին: Իսկ հայ ժողովուրդը իսկապես ազնիվ, աշխատասեր, խելացի ժողովուրդ և, ամենակարևորը, Ֆրանսիային հավատարիմ: Ահա արդեն բազում տասնամյակներ այնպիսի նվիրվածություն, սեր, փոխվստահություն, որ գոյություն ունի մեր երկու ժողովուրդների միջև, դուք հաճախ չեք տեսնի ուրիշների մոտ: Եվ հետո 50 տարի ապրելով հայ ժողովրդի ծոցում, ես լավ գիտեմ հայերի մտածելակերպը: Նրանք շատ երախտապարտ մարդիկ են, իրենց հանդեպ արված լավությունը ձգտում են փոխհա-տուցել տասնապատիկ, հարյուրապատիկ անգամ:

Նույնիսկ եթե դարեր անցնեն, հայ ժողովուրդը երբեք չի մոռանա, որ Ֆրանսիան առաջիններից մեկն էր, որ հայ ժողովրդին օգնության հասավ թե՛ Մեծ Եղեռնից և թե՛ 1988 թ. ավերիչ երկրաշարժից հետո: Եվ պատահական չի այն փաստը, որ Ֆրանսիան շատ հայերի համար դարձել է մշտական հանգրվանի երկրներից մեկը:

«Տարիներ առաջ,- պատմում է պարոն Ռոբանը,- Փարիզի հայկական եկեղեցում պատահական ծանոթացա մի ֆրանսիացու հետ, ով հետո պարզվեց, որ երկար տարիներ ապրել էր Մարսելում: Այս մարդն ուղղակի սիրահարված էր հայ ժողովրդին և հայկական Զատիկի օրը որոշել էր այցելել հայկական եկեղեցի: Նա ասաց. «Աշխատել եմ որպես ոստիկան մի քաղաքում, որտեղ տասնյակ հազարավոր հայեր էին ապրում. Իմ աշխատած տարիներին ես ոչ մի բացասական բան չեմ տեսել այդ ժողովրդից: Բոլորը արհեստավորներ են, արվեստագետներ, մարզիկներ, գիտաշխատողներ, առևտրականներ, ձեռներեցներ ու, եթե անգամ բանվորներ՝ ապա անպայման առաջնակարգ»:

Անշուշտ, ես ներքուստ հպարտ էի՝ լսելով պաշտոնաթող ոստիկանի խոսքերը, որովհետև սիրտս բաբախում է ոչ միայն Ֆրանսիայի, այլև Հայաստանի համար. մի գողտրիկ երկիր, որտեղ ապրում են հրաշալի մարդիկ: Մարդիկ, որոնց օգնության շնորհիվ էր, որ 1947 թ. պատերազմից հետո 14 տարեկանից սկսած ես ապրեցի և գոյատևեցի՝ չնայած զրկանքներին ու ցրտին: Հայերեն չգիտեի, օրենքներն ու սովորույթները նույնպես: Ու չնայած այդ տարիներին նրանք էլ ուտելիքի մեծ պակաս էին զգում, սակայն ինձ, իմ քույր-եղբայրներին, հայրենադարձված իմ հայրենակից հայերին օգնեցին ոտքի կանգնել:

Նշենք, որ այժմ էլ պ. Ռոբանն է անշահախնդրորեն և մեծ նվիրվածությամբ օգնության ձեռք մեկնում Հայաստանից եկած շատ հայերի: Մեր ընտանիքն այն երջանիկներից է, որոնց Պոլ պապիկն օգնել է իր կարևորագույն և բախտորոշիչ խորհուրդներով, բարոյահոգեբանական աջակցություն ցուցաբերել հուսալքության պահերին և ամենատարբեր հարցերի ու խնդիրների լուծման գործում:

Նրա աջակցությունն ու օժանդակությունը հիրավի մեծ են լիլահայերից շատերի համար՝ ի դեմս մեր ընտանիքի, հատկապես ինձ համար: Օգտվելով ստեղծված հնարավորությունից, ես ցանկանում եմ խորին երախտագիտությունս հայտնել ինձ համար անչափ հարգելի և շատ սիրելի Պոլ պապիկին՝ իր կատարած հայրենանվեր և մարդասիրական գործերի համար ու խոնարհվել նրա բարձր մարդկային արժանիքների առաջ:

Մարտի 18-ին լրանում է պ. Պոլ Ռոբանի 75-ամյակը: Զգիտեմ՝ պատահաբար, թե մի անբացատրելի խորհրդով, այդ օրը նաև ազատության և հավասարության պայքարի պատմության մի էջի՝ Փարիզի կոմունայի օրն է: Նկատի ունենալով Պ. Ռոբանի մարդկային արժանիքներն ու առաքինությունը, ինչպես նաև ի նշան երախտագիտության՝ նրա զավակներն ու թոռները որոշել են իրենց ընտանիքում ծնված բոլոր արու զավակների երկրորդ անունը, ինչպես ընդունված է Ֆրանսիայում, դնել Պոլ-Լյուսիեն:

commerçants, entrepreneurs. Même ouvriers, ils sont alors forcément de haut niveau ».

En écoutant l'ancien policier, j'étais bien évidemment fier en moi-même, car mon coeur bat aussi bien pour la France que pour l'Arménie, ce petit pays mystérieux où vivent des gens magnifiques. Grâce à ses derniers, après la guerre en 1947, dès l'âge de 14 ans, j'ai vécu et j'ai existé en dépit de la pénurie de nourriture et du froid. Je ne connaissais ni l'arménien, ni les règles et coutumes locales. Malgré leurs propres privations de nourriture, ils nous ont aidé, mes frères et sœurs arméniens rapatriés. Ils ne nous ont pas abandonné et nous ont pleinement soutenu ».

Il convient de constater que maintenant Monsieur Roban, sans arrière pensée et avec beaucoup d'altruisme, tend la main et soutient les Arméniens qui arrivent de l'Arménie. Moi et ma famille, nous sommes parmi ces heureux que l'oncle Paul a aidés de ses précieux conseils aux moments cruciaux. Il nous a apporté son soutien moral et psychologique pendant les périodes de déception et dans la résolution de différentes questions et problèmes.

Son concours et son soutien sont considérables pour une bonne partie de la communauté arménienne de Lille, notamment en ce qui concerne ma famille et moi personnellement. Je profite de l'occasion pour lui exprimer ma profonde gratitude pour ses actions patriotiques et humanitaires et m'incline devant ses hautes valeurs humaines.

Le 18 mars, Monsieur Paul Roban a fêté ses 75 ans. Hasard ou non, c'est également le jour de la Commune de Paris, une page d'histoire de lutte pour la liberté et l'équité.

Compte tenu des valeurs humaines de Monsieur Roban et de son honnêteté, ainsi qu'en signe de reconnaissance, ses enfants et petits-enfants ont décidé d'ajouter au prénom de tous les enfants mâles nés dans leurs familles celui de Paul-Lucien.

Nous félicitons Monsieur Roban à l'occasion de son anniversaire et lui souhaitons de longues années de vie.

Gnel Gevorgyan

DU RÊVE À LA RÉALITÉ

Grâce au soutien financier de la Ville de Lille, nos jeunes danseurs bénéficient depuis le 1er mars dernier de cours de la danseuse et chorégraphe Christina Galstian-Agoudjian. Née à Erevan, elle a intégré à 11 ans l'Académie de danse de cette ville et a travaillé notamment avec le grand chorégraphe Azat Gharibian. Elle a ensuite rejoint le ballet National d'Arménie dirigé par Vanoush Khanamirian.

Arrivée en France, elle poursuit ses études et passe une maîtrise de russe à la Sorbonne tout en enseignant la danse arménienne au sein de groupes amateurs. Elle a également suivi pendant trois ans les cours d'art dramatique au Cour Florent.

En 2004, elle crée le spectacle *Parfums d'Arménie* exécuté par 70 artistes de l'école de danse *Yeraz*. C'est ce spectacle que nous sommes allés voir avec les jeunes à Maison Alfort en novembre.

Pendant 10 à 12 cours à donner à Lille, Madame Galstian apprendra aux jeunes de nouvelles danses qu'ils interprèteront, si tout se passe comme nous le souhaitons, le 21 septembre prochain. Elle transmet son savoir avec expérience et passion. Les jeunes apprécient et en redemandent. Anna et Kristina suivent également avec attention ces cours et entraînent les jeunes entre les séances données par la chorégraphe. Elles rêvent toutes deux de pouvoir assister aux cours de Mme Galstian à Paris et, qui sait, peut-être qu'un jour « yeraz » (« rêve » en arménien) deviendra réalité…

Louisette Lamarche

Մենք շնորհավորում ենք պարոն Ռոբանին ծննդյան օրվա առթիվ և ցանկանում երկար տարիների կյանք:

Կցանկանայի վերջացնել խոսքս հետևյալ բանաստեղծությամբ, որը սիրով նվիրում եմ Պոլ պապիկին՝ ի նշան իմ խորին հարգանքի, որ տածում եմ նրա հանդեպ.

ՊՈԼ ՌՈԲԱՆ

Պապիկ սիրելի՝ դու մեր բոլորի,
Որքա՛ն բարություն կա քո մեջ, հարգելի՛ս,
Լիիրավ պապիկ եմ ես քեզ համարում, քանզի ինձ
հարազատ թոռնիկիդ պես ես ընդունում:
Ղեկն աշխարհի ձեռքդ պիտ վերցնես,
Որ այս աշխարհը բարությամբ լցնես:
Բարեփառ համբավդ՝ բարձր աշխարհիկ,
Անձդ բարեպաշտ, մարդկային հոգիդ,
Նման չունես, դու մեր Պո՛լ պապիկ:

Գնել Գևորգյան

ԵՐԱԶՆ ԻՐԱԿԱՆԱՆՈՒՄ Է

Լիլի քաղաքապետարանի ֆինանսական աջակցության շնորհիվ մարտի 1-ից մեր պատանի պարողները հնարավորություն են ստացել ուսանել պարուհի և պարուսույց Քրիստինա Գալստյան-Ագուջյանի ղեկավարությամբ: Նա ծնվել է Երևանում: 11 տարեկան հասակում ընդունվել է նույն քաղաքի Պարի ակադեմիան: Ուսանել է մասնավորապես մեծ պարուսույց Ազատ Ղարիբյանին: Ավելի ուշ նա ընդգրկվել է Վանուշ Խանամիրյանի ղեկավարած Հայաստանի պարի պետական անսամբլի կազմի մեջ:

Տեղափոխվելով Ֆրանսիա՝ նա համատեղել է իր Սորբոնի համալսարանի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետի մագիստրատուրայի ուսումն ինքնագործ համույթներում պարի դասեր տալու հետ: Երեք տարի շարունակ Ք.Գալստյանը հաճախել է նաև Ֆլորանի դրամատիկական արվեստի դասընթացներին:

2004 թ. նա ստեղծում է «Հայաստանի բույրերը» ներկայացումը, որի մեջ ընդգրկվում են «Երազ» պարի դպրոցի 70 սաներ: Անցյալ տարվա նոյեմբեր ամսին մենք մեր պատանիներին հնարավորություն տվեցինք գնալ Մեզոն Ալֆոր ներկա լինելու այս ներկայացմանը:

10-12 պարապմունքների ընթացքում տիկին Գալստյանը պատանիներին կսովորեցնի նոր պարեր, որոնք կներկայացվեն հանդիսատեսի ուշադրությանը այս տարվա սեպտեմբերի 21-ին, եթե ամեն ինչ լինի այնպես, ինչպես նախատեսել ենք: Նա մեծ սիրով է փոխանցում իր փորձը, և երեխաները դա բարձր են գնահատում ու անհամբերությամբ սպասում հերթական հանդիպմանը: Աննան և Քրիստինան նույնպես մեծ հաճույքով են մասնակցում այս պարապմունքներին: Նրանք շարունակում են պատանիների հետ աշխատել Ք. Գալստյանի պարի դասընթացների միջև ընկած ժամանակահատվածում: Երկուսն էլ մեծ ցանկություն ունեն մասնակցելու պարուսույցի փարիզյան պարապմունքներին: Ո՞վ գիտե, միգուցե երազը մի օր կդառնա իրականություն...

Լուիզեթ Լամարշ

Les élèves et le professeur de danse Ch.Galstian lors du premier cours
Սաներն ու պարուսույց Ք.Գալստյանն առաջին պարապմունքի ժամանակ

Le coin de la poésie

Rosa Topalian

LES ARMÉNIENNES

Les filles arméniennes
Brillentes comme des sirènes,
Elles sont magnifiques et douces
Comme des roses rouges.

Les filles arméniennes
Ont des yeux noirs et rêveurs,
Elles sentent meilleures que les fleurs
Et elles réfléchissent avec le cœur.

Les filles arméniennes sont merveilleuses,
Elles méritent toutes d'être heureuses
Elles sont magnifiques et
Elles sont toujours très élégantes.

Elles ont la perfection dans l'âme,
Elles sont bourrées de charme,
Les filles arméniennes sont très jolies,
Pour elles les garçons feraient des folies.

Սուսաննա Մուղնեցյան / Sussanna Mughnetsyan

ՁՈՆ՝ ԼԻԼ ՔԱՂԱՔԻՆ

Քաղաքներ բազում, նաև բազմազան,
Որ հանդիպել են իմ կյանքի ուղում,
Խիստ տարաբնույթ իրենց էությամբ
Տարբեր հույզեր են թողել իմ սրտում,
Որոնք հաճախ եմ էջ առ էջ թերթում՝
Կրկին ապրելով բերկրանք ու հուզում...

Ա՜խ, ճանապարհներ, խաչվո՜ղ, բաժանվո՜ղ,
Տանո՜ղ ու բերո՜ղ, տվո՜ղ ու առնո՜ղ,
Ուրախ ու տխուր, խենթ ճանապարհներ,
Որոնց հորձանքին անձնատուր եղած՝
Մի օր կանգնեցի մի նոր քաղաքի դռների առաջ
Ու սպասումով երկար բախեցի դարպասները փակ:

Բարեբեր երկրի հյուսիսում ծաղկող քաղաքը օտար
Հնչեղ ու սիրուն Լիլ անունով էին պատվում ծաղկային,
Ամենաքնքուշ ու խորհրդավոր, նուրբ ու նազելի,
Ճերմակազգեստ ծաղկի անունով,
Իսկ հանդիպումը նոր քաղաքի հետ տեղի ունեցավ
Մռայլ, անարև, պաղ առավոտի մշուշների մեջ:

Քաղաքը դանդաղ, ծույլ, քնաթաթախ,
Ջրաշուշանի ալարկոտությամբ ջղաձգվում էր
Իր արթնացումի սարսուռների մեջ...
Չնախատեսված հանդիպումը մեր
Ճակատագրի քմահաճ խաղով
Տեղի ունեցավ կամա-ակամա, առանց հրավերի,
Ողջույնի խոսքի ու ֆրանսիական զույգ համբույրների:

Մի պաղ առավոտ, անլույս առավոտ
Լացող երկնքի հովանու ներքո
Քեզ այցի եկա անկոչ ու մոլոր,
Մի քիչ շփոթված, հոգնած, հուսաբեկ...
Դու ինձ նայեցիր հյուսիսցու պարզ ու շիտակ հայացքով,
Մի տեսակ վերից՝ քո շուշանային վեհ բարձունքներից:

Օ՜, Լի՜լ, Լի՜լ քաղաք, դու հյուսիսային պաղ գեղեցկուհի,
Հյուսիսի դարպաս՝ բարձր ու անառիկ,
Ինձ ընդունեցիր, որպես անկոչ հյուր ու օտարական,
Որը տանտիրոջ անդորրն է խախտում
Լույսը չբացված՝ առավոտ կանուխ,

Պոեզիայի անկյուն

Ռոզա Տոպալյան

ՀԱՅՈՒՀԻՆԵՐԸ

Հայ աղջիկները՝
Չքնաղ ու համեստ,
Կարմիր վարդի պես
Փայլում են կարծես:

Հայ աղջիկները
Սև երազկոտ աչքեր ունեն,
Ծաղիկներից էլ անուշ բուրմունք ունեն,
Որով գերում են բոլորին:

Հայ աղջիկները
Սև մազեր ունեն,
Մաքուր հոգի և
Հիասքանչ ժպիտ ունեն:

Հայ աղջիկները
Բոլորից գեղեցիկ, բարի ու նազելի են,
Մի խոսքով անզուգական են,
Եվ այն պատճառով, որ հայուհի են:

Rosa Topalian Ռոզա Տոպալյան

Ինձ՝ ջերմ հարավցու,
Դու ընդունեցիր սառն ու անտարբեր...
Վեհ խաղաղությամբ ազնվաբարո, քմահաճ տիկնոջ
Ժեստով արտիստիկ «Bonjour» ասացիր,
Լոկ սովորությամբ դարերից եկած,
Ու ես քո շեմից ներս չմտած՝ մեկից մրսեցի
Ու կարոտեցի իմ բոբը արևին...
Մեր հանդիպումը պաշտոնական էր, անվստահ ու զուսպ:

Ես չզարմացա ոճավորումից քո ֆլամանդական,
Քանզի տեսել էի բազում քաղաքներ՝
Շքեղ, մարդաշատ, թե հնամենի, թե արդիական,
Ու ինձ չհուզեց նույնիսկ անցյալը քո ասպետական:
Լոկ մի թռուցիկ հայացք ձգեցի քաղաքի վրա
Ու չընկալեցի հմայքն անծանոթ, օտար գեղուհու:

Անցավ ժամանակ, ամեն ինչ կրկին արժեքավորող
Մի կարճ ու երկար, ոսկի ժամանակ,
Ինձ վերագտա այս օտար երկրում, օտար քաղաքում,
Որ Լիլ է կոչվում...

Ու կրկին նոր ու նորովի նրան նայեցի,
Նայեցի երկար, անձրևից հետո երկար նայեցի
Նրա բաց կապույտ, խորունկ աչքերին
Ու տեսա նրա պարզ ու ջինջ, շիտակ, թափանցիկ հոգին,
Որ նվիրում է բոլոր-բոլորին, ուզող-չուզողին,
Կարիքավորին, խեղճին, նվազին, մեծին ու փոքրին, բոլոր-բոլորին...

Ու կրկին արդեն յուրովի քաղաքն ընկալած՝
Ման եկա երկար հին ու նոր Լիլում
Ու Լիլին հարող գողտրիկ, ծաղկավետ կից քաղաքներում

Եվ նոր-նորովի բացահայտեցի ոգին քաղաքի,
Որը հանրահայտ իր զավակներով միշտ փառաբանված
Մնում է դարձյալ պարզ, շիտակ, մաքուր, ազնիվ ու բարի...

Իսկ երբ անցնում էի հին Լիլի միջով
Սալահատակին նեղ փողոցների քաջ ասպետների
Խորշ նժույգների քառատրոփ վազքն էի ես լսում անցյալից,
Ու ասպետական ոգին մոգական լուռ թևածում էր
Կղմինդրածածկ ու աղյուսաշեն քաղաքի վրա՝
Անմահ պահելով անցյալի հուշն ու հիշողությունը:

Հնի ու նորի խաչաձևումից
Անցյալն ու ներկան խառնվելով իրար՝
Լիլին տալիս են փառապանծ տիկնոջ մի կարգավիճակ,
Որն այսօր կրկին ջահելացել է, զուգվել, զարդարվել,
Ճերմակափրփուր զգեստներ հագել ու հարսնացել,
Եվ նորահարսի իր սպասումներով գնում է դեպի խորանը
լույսի
Վստահ ու շիտակ, փութկոտ քայլերով:

Իր հյուսիսային խոսուն լռությամբ,
Մեծ մարդասերի լուռ հպարտությամբ քաղաքն այս չքնաղ
Իմ սիրտը գերեց ու իրեն կապեց հազար թելերով ու
հազար հույզերով,
Ու հավետ դարձրեց իր սիրահարը, ջերմ սիրահարը,
Հյուսիսաբնակ չքնաղ դիցուհի, որ շուշանային իր գոյության
մեջ
Մեծ խորհուրդ ունի մարդկանց ասելու:

Եվ երբ անցնում էի անձրևից հետո մաքուր լվացված նեղ
փողոցներով,
Ծանոթ-անծանոթ մարդիկ քաղաքի ժպտուն ու բարի
«Bonjour» էին ասում ինձ՝ անծանոթիս:
Օ՜, «Bonjour, bonjour, bonjour mon amie»,
Օ՜, Լի՜լ, Լի՜լ քաղաք, փրկության կղզյակ հույս ու հավատի
Ճերմակ առագաստ, երազների ափ հյուսիսում բուսած:

Քո մեղմությունը երբեք չեն կոտրի
Ոչ հյուսիսային քամիներդ խենթ,
Ոչ էլ անձրևդ՝ տարափով թափվող,
Իսկ քո բնության խստությունը լոկ
Բնույթդ թաքցնող շղարշ է թափանցիկ,
Որով պատվում ես ամպոտ օրերին:

Ով դու ծաղկասեր, ծաղկավետ քաղաք, ամենաքնքուշ ծաղկի
անունով
Դու հյուսիսային լուսաստղ պայծառ՝ ճամփա ցույց տվող,
Եղիր միշտ այդպես բարի, մարդասեր,
Ու քո մեծ սիրուց թող հոսեն գետեր,
Ու թող աշխարհը, քո սիրուց արբած,
Մի քիչ խաղաղվի ու բարիանա...

Ու «Bonjour» ասի բոլ՜ր-բոլորին՝
Ուզող-չուզողին, խեղճին, նվաստին, կարիքավորին
Մեծին ու փոքրին, բոլո՜ր բոլորին…

Cuisine

MOULES FARCIES par Garik

Ingrédients

Moules d’Espagne (grosses)
Riz (de préférence en sachet)
Pignons
Raisins secs
Oignons
Carottes
Céleri branche
Beurre
Poivre noir moulu
Sel
Fil de cuisine
Papier d’aluminium

Préparation :

- Gratter les moules puis faites-les tremper dans de l’eau fraîche pendant 30 minutes avant de les rincer plusieurs fois.
- Faire cuire les moules et le riz en sachet dans de l’eau bouillante salée avec l’oignon, la carotte et le céleri pendant 20 minutes.
- Egoutter les moules et les farcir du riz cuit, de pignons, de raisins secs (trempés préalablement dans de l’eau tiède), de poivre et d’une fine tranche de beurre.
- Fermer la coquille, la fixer avec le fil de cuisine et emballer chaque moule de papier aluminium.
- Placer les moules emballées au four environ 10 minutes à 200°.

. Les moules emballées peuvent être congelées pour être passées au four quelques jours plus tard.

Խոհանոց

ԼՑՈՆԱԾ ՁԿՆԱԿԱՆՋ՝ Գարիկից

Բաղադրամասեր

Իսպանական (մեծ) ձկնականջներ
Բրինձ (նախընտրելի է տոպրակով փաթեթավորված)
Խոզակ (սոճու ընկույզ)
Չամիչ (նախընտրելի է առանց կորիզի)
Սոխ
Գազար
Կարոս (քարաուզ)
Կարագ
Աղացած սև պղպեղ
Աղ
Թել (խոհանոցի)
Ալյումինե նրբաթիթեղ (ֆոլգա)

Պատրաստման եղանակը

- Մաքրել (քերելով) ձկնականջները և ընկղմել սովորական ջրի մեջ մոտ 30 րոպե, այնուհետև մի քանի անգամ պարզաջրել:
- Մոտ 20 րոպե եփել ձկնականջները և բրինձը (քսակով) եռացրած ջրի մեջ՝ ավելացնելով աղ, սոխ, գազար և կարոս (բոլորն ըստ նախընտրության):
- Ձկնականջները հանել ջրից, քամել և լցոնել եփած բրնձով, խոզակով, նախօրոք գոլ ջրի մեջ թրջած չամիչով, սև աղացած պղպեղով և կարագի բարակ շերտով:
- Փակել պատյանը՝ կապելով խոհարարական թելով և հատ-հատ փաթաթել ալյումինե նրբաթիթեղի (ֆոլգայի) մեջ:
- Պատրաստած ձկնականջները 10 րոպեով դնել գազօջախի մեջ 200°-ի տակ:

. Պատրաստած ձկնականջները կարող են պահպանվել սառնարանում և տաքացվել գազօջախում ցանկացած դեպքում:

Liste des nouveaux membres de l'Association *Ararat* (2007/2008) à la date de mars 2008 (10 euros par famille)
«Արարատ» միության նոր անդամների ցուցակը (2007/2008) 2008 թ. մարտ ամսվա դրությամբ (10 եվրո՝ ընտանիքից)

1. Alexanian	Norik	8. Lmntsian	Razmik et Jaqueline
2. Avetissian	Lilit	9. Mouradian	Stepan et Karine
3. Bazinian/Mughnetsyan	Tatevik et Vahé	10. Patatian	Meroujan et Gayane
4. Bazinian/Mardoyan	Edouard et Nariné	11. Sahakian	Armen et Elena
5. Kasparyian	Jaqueline et Samvel	12. Vardanian	Sourik
6. Gevorgyan	Marieta	13. Yeghshatyan	Manvel
7. Gharibyan	Gevorg et Jasmine	14. Yeghshatyan	Vahe et Irina

Liste des dons effectués à ce jour (janvier-mars 2008)
Մինչև օրս կատարված նվիրատվությունները (հունվար-մարտ 2008 թ.)

1. Arakelian	Vahram	10 euros
2. Lmntsian	Razmik et Jaqueline	4 euros

Autres dons en nature (janvier-mars 2008)
Կատարված այլ նվիրատվություններ (հունվար-մարտ 2008թ.)

1. Galstyan/Lamarche Garik et Louisette pour le solde du n° 2 de la gazette *Ma-sis*
2. Babikian Siranouche pour les fournitures des activités scolaires (Pâques) et pour les cartes de vœux (Fête des Femmes)
1. Գալստյան/Լամարշ Գարիկ և Լուիզեթ՝ «Մա-Սիս» թերթի 2-րդ համարի ծախսերի մնացորդը
2. Բաբիկյան Սիրանուշ՝ դպրոցական միջոցառումներ կազմակերպելու (Զատիկ) և շնորհավորական բացիկների (Կանանց Տոն) ծախսերը

ASSOCIATION ARARAT
65 Rue Saint Bernard
59000, Lille

BULLETIN D'ADHESION

Nom ____ Prénom ____

Adresse ____

Mail ____ Téléphone____

Adhère à l'association ARARAT pour l'année 2007/2008
a payé une adhésion simple de 10 euros
une adhésion groupée avec la gazette *Ma-sis* de 20 euros

Pour tout cela et pour toute autre remarque, vous pouvez nous joindre aux adresses suivantes :
Par mail : aadelille@voila.fr
Par courrier : 4 impasse du clos Ferrer, 59 000, Lille-Fives
Par téléphone : 03.20.05.42.25 ou 03.20.57.45.06

Այս համարին առնչվող բոլոր դիտողությունները կարող եք մեզ հայտնել հետևյալ հասցեներով՝
Էլեկտրոնային փոստ՝ aadelille@voila.fr
Փոստային հասցե՝ 4 impasse du clos Ferrer, 59 000, Lille-Fives
Հեռախոսներ՝ 03.20.05.42.25 կամ 03.20.57.45.06

Responsable de publication en français : Louisette Lamarche, Garik Galstyan
Responsables de publication en arménien : Garik Galstyan, Haïk Gambarian
Traduction : Garik Galstyan, Gnel Gevorgyan

Ֆրանսերեն հրատարակչության պատասխանատու՝ Լուիզեթ Լամարշ, Գարիկ Գալստյան
Հայերեն հրատարակչության պատասխանատու՝ Գարիկ Գալստյան, Հայկ Ղամբարյան
Թարգմանությունները՝ Գարիկ Գալստյանի, Գնել Գևորգյանի

Imprimé par nos soins.
À ne pas jeter sur la voie publique.

Տպագրված է մեր միջոցներով:
Չգցե՛լ հասարակական վայրերում:

<u>Sites Internet utiles pour s'informer sur l'Arménie</u>

http://www.a1plus.am
http://www.armenia-online.ru/armnews
http://www.azatutyun.am
http://ditord.wordpress.com
http://fr.agbueurope.org/

<u>Ինտերնետային օգտակար կայքեր Հայաստանի մասին տեղեկություններ ստանալու համար</u>

http://merhayrenik.narod.ru/news.html
http://www.payqar.net
http://www.sda-europe.blogspot.com
http://www.yevrobatsi.org
http://www.zhamanak.com